


ՀՀ ԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃՎԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА



Վլադիմիր
Եղիշի
Խոջաբեկյան



Владимир
Егишевич
ХОДЖАБЕКЯН



ЛІБОВІДІЙСЬКИЙ
ІМЕННИЙ ФОНД
ІМЕНІ І.І.ІВАНОВОГО

ІМЕННИЙ ФОНД
ІМЕНІ В.І.ІВАНОВОГО



ІМЕННИЙ ФОНД
ІМЕНІ В.І.ІВАНОВОГО

ԿԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՐԻՄՍԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ԿԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՍՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

N 59

ՎԼԱՂԻՄԻՐ ԵՂԻՇԻ ԽՈԶԱԲԵԿՅԱՆ

Ներածական՝ Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ, Գ.Ն.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ,
Գ.Գ.ԽԱՆԻԿՅԱՆԻ և Է.Շ.ՕՐԴՅԱՆԻ

Մատենագիտությունը կազմել են Մ.Գ.Պետրոսյանը և
Ա.Ռ.Գալստյանը

Խմբագիր - մատենագետ՝ Մ.Վ.Սարգսյան

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

2004

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА
МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

N 59

ВЛАДИМИР ЕГИШЕВИЧ
ХОДЖАБЕКЯН

Вступительная статья В. А. МИКАЕЛЯНА,
А. Н. КАРАПЕТЯНА,
Г. Г. ХАНИКЯНА и Э. А. ОРДЯНА

Библиография составлена М. Г. Петросян, А. Р. Галстян
Редактор – библиограф М. В. Саркисян

ИЗДАТЕЛЬСТВО “ТИТУЛОН” НАН РА
ЕРЕВАН 2004

**Տպագրվում է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ
Հիմնարար գիտական գոադարանի գիտական
խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական կոլեգիա
Հ.Ռ.ՍԻՄՈՆՅԱՆ (նախագահ), Դ.Բ.ՆԵՐՍԻՍՅԱՆ,
Լ.Տ.ՋՐԲԱՇՅԱՆ, Ս.Ն.ՍԱՐԻՆՅԱՆ, Դ.Ս.ԹԵՐԶՅԱՆ**

**Պատասխանատու խմբագիր
Վ.Ա.Միքայելյան**

**Печатается по решению ученого совета
фундаментальной научной библиотеки АН Республики
Армении**

**Редакционная коллегия
Гр.Р.СИМОНЯН(председатель), А.Б.НЕРСИСЯН,
Р.Т.ДЖРБАШՅԱՆ, С.Н.САРИՆՅԱՆ, А.Ա.ТЕРՅԱՆ**

**Ответственный редактор
В.Ա.МИКАЕԼՅԱՆ**

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, 2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
Վ.Ե. ԽՈԶԱԲԵԿԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒԵՇՈՒԹՅԱՆ
ԴԻՄՈՒԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԿԵՐԸ

Վլադիմիր Եղիշի Խոջաբեկյանը ծնվել է 1929թ. մարտի 2-ին Դայաստանի Դանրապետության Բասարգեցչարի (այժմ Վարդենիս) շրջանի Չախրլու (այժմ Խաչաղբյուր) գյուղում:

1946թ. ավարտել է Վարդենիսի միջնակարգ դպրոցը:

1946-1949թթ. աշխատել է Խաչաղբյուրի միջնակարգ դպրոցում որպես ավագ ջոկատավար:

1954թ. Գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի քաղաքատնտեսության բաժինը:

1955-1960թթ. աշխատել է Դայպետիրատում որպես քաղաքական գրականության խմբագիր:

1959թ. ավարտել է Երանի պետական համալսարանի հեռակա ասպիրանտուրան «քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ: 1955-1973թթ. եղել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ասիստենտ, դասախոս

1960թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում:

- ընտրվել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատողի պաշտոնակատար:

1963թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

- 1963-1964թթ. եղել է բժշկական ինստիտուտի դասախոս:

1964թ. Դամամիութենական գիտաժողովի մասնակից Ալմա-Աթայում:

1966թ. շնորհվել է տնտեսագիտության ավագ գիտաշխատողի կոչում:

1967թ. ընտրվել է տնտեսագիտության ինստիտուտի ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների բաժնի վարիչ, որը վարում է առ այսօր:

1970-1975թթ. դասախոսել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում:

1970թ. պարգևատրվել է հորեցանական մեդալով:

- Ենինգրադում կայացած տնտեսագետների միջազգային գիտաժողովում Հայաստանի պատվիրակության անդամ:

1973թ. պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ «Պատվոգրով»:

- Մասնակցել է ԽՍՀՄ և Ռուսական ԽՍՀ գիտությունների ակադեմիաների միջազգային գիտաժողովին Կիևում:

1974թ. պարգևատրվել է ՀԽՍՀ ԳԱ նախագահության և ՀԱՄԽ-ի «Սոցիալստական մրցության 1973թ. հաղթող»-ի կրծքանշանով:

- ԽՍՀՄ Պետալանի կոլեգիայի «Հորեցանական» պատվոգրով:

1974թ.-ից Հայկական հանրագիտարանի բնորոշական տնտեսագիտության գիտաճյուղային խորհրդի անդամ է:

1974թ. տնտեսագետների միջազգային գիտաժողովի պատգամավոր Բուրապեշտում:

1975թ. շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

1975-1977թթ. ժողովագործ տնտեսության ինստիտուտի պրոֆեսորի պաշտոնակատար:

- տնտեսագետների համամիութենական գիտաժողովի պատգամավոր Աշխարաղում:

1976թ., 1978թ. և 1980թ. գնելուցումներով հանդես է եկել ԳԴՐ ակադեմիայի կենտրոնական տնտեսագիտության, Հայպետի տնտեսագիտության, Դրեզդենի աշխատանքի ինստիտուտներում և Բեռլինի Հումքութի անվան համալսարանում:

1977թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

1978թ. համամիութենական գիտագործնական գիտաժողովի պատգամավոր Մոսկվայում:

- Պարզևատրվել է ՀԽՍԴ ԳԱ «Պատվոգրով»:
- Պարզևատրվել է Համամիութենական «Գիտելիք» ընկերության «Պատվոգրով»:

1978-1988թթ. Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի պրոֆեսոր:

1980թ. ընտրվել է «Գիտելիք» ընկերության Երևանի տնտեսագիտության բաժնի վարիչ:

1980-1991թթ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի ժողովրդագիրության և աշխատանքային ռեսուրսների հիմնահարցերի խորհրդի անդամ:

1982թ. ընտրվել է ՀԽՍԴ ԳԱ թղթակից անդամ:

1983թ պարզևատրվել է. «Գիտելիք» Համամիութենական միության վարչության նախագահության շնորհակալական պատվոգրով

1983թ. ՀԽՍԴ ԳԱ տնտեսագիտության "ինստիտուտի փոխտնօրեն":

1985թ. պարզևատրվել է ԽՍՀՄ Գիտաշմտեսագիտական ընկերության կենտրոնական վարչության համամիութենական մրցանակաբաշխության դիպլոմով՝ 1984թ. գերմանացի գիտնականներ Յու.Վազերի, Ռ.Շեֆերի համահեղինակությամբ հրանտարակած "Проблемы демографии и воспроизводства трудовых ресурсов" լավագույն տնտեսագիտական աշխատանքի համար, աշխատանքի խնայողության ռեզերվների օգտագործման անպարեզում:

1985-1993թթ. «Գիտելիք» ընկերության նախագահի տեղակալ:

1986թ. համամիութենական գիտագործնական գիտաժողովի մասնակից Մոսկվայում:

1987թ. տնտեսագետների գիտագործնական գիտաժողովի մասնակից Թբիլիսիում և Բաքվում հնդիկ տնտեսագետների հետ:

- Համամիութենական գիտագործնական գիտաժողովի մասնակից (Մոսկվա-Սուլզդլա):

1988թ. տնտեսագետների միջազգային գիտաժողովի մասնակից Դելիում:

- Տնտեսագետների համամիութենական գիտաժողովի մասնակից Դիլիջանում:

1989թ. պարզևատրվել է Հայաստանի «Գիտելիք» ընկերության վարչության նախագահության «Կաստակագրով»:

1989-1994թթ. Երևանի ժողոտնտեսության ինստիտուտի պրոֆեսոր:

1990թ. գեկուցումներով հանդես է եկել Սիդնեյի հայկական համայնքներում:

1990թ.-ից՝ Հայկական համառոտ հանրագիտարանի բոլոր հատորների գիտախմբագրական խորհրդի անդամ:

1994թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1994թ. տնտեսագետների միջազգային գիտաժողովի մասնակից Թեհրանում:

1995 Միջազգային գիտական նստաշրջանի մասնակից Մոսկայում:

1998թ. «Կինը և հասարակությունը» Երրորդ միջազգային գիտաժողովի մասնակից Ծաղկաձորում:

- Միջազգային տնտեսագիտական գիտական նստաշրջանի մասնակից Մոսկվայում:

- Սոցապ նախարարության գիտագործնական խորհրդի անդամ մինչև 2002թ.:

1999թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն:

- Արժանացել է Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից «1998 թվականի Տարվա մարդ կոչմանը»:

- Ռուսաստանի Դաշնության ԳԱ նախագահության միջազգային գիտագործնական գիտաժողովի մասնակից Մոսկվայում:

- Ընտրվել է Ազգային անվտանգության պրոբլեմների գծով գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս:

- Ընտրվել է ՀՀ ԳԱԱ հումանիտար բաժանմունքի փիլիսոփայության, տնտեսագիտության և իրավագիտության պրոբլեմային խորհրդի նախագահ:

- ՀՀ կառավարությանն առընթեր «Միգրացիայի և փախստականների վարչությանը» կից մասնագիտական խորհրդի անդամ մինչև 2002թ.:

- ԱՊԴ և Բալթյան երկրների անկախ հետազոտական խորհրդի հարկադիր գաղթի հիմնահարցերին նվիրված 2-րդ միջազգային նստաշրջանի մասնակից:

- «Պրոբլեմի տեսրիի ի պրակտիկի ուսպավենիա» միջազգային ամսագրի ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից ներկայացուցիչ-անդամ:

2003թ. կառավարական գիտագործնական նստաշրջանի մասնակից Մոսկվայում:

2003թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու անվան մեդալով:

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ АКАДЕМИКА НАН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ВЛАДИМИРА ЕГИШЕВИЧА ХОДЖАБЕКЯНА

Владимир Егишевич Ходжабекян родился 2 марта 1929г. в селе Чахрлу (ныне Хачаబюр) Басаргечарского (ныне Варденисского) района Республики Армении.

1946г. Окончил Варденисскую среднюю школу.

1946-1949гг. Работал старшим вожатым в Хачаబюрской средней школе.

1954г. С отличием окончил экономический факультет Ереванского государственного университета по специальности "политэкономия".

1955-1960гг. Редактор отдела политической литературы "Айспетрагта".

1959г. Окончил аспирантуру Ереванского государственного университета по специальности "политэкономия" (заочно).

1955-1973гг. Ассистент, преподаватель (почасовая оплата) экономического факультета Ереванского государственного университета.

С 1960г. Работает в Институте экономики НАН РА (в 1960г. избран исполняющим обязанности старшего научного сотрудника).

1963г. Присуждена ученая степень кандидата экономических наук.

1963-1964гг. Преподаватель Ереванского медицинского института.

1964г. Участник Всесоюзной конференции в Алма-Ате.

1966г. Присвоено звание старшего научного сотрудника.

С 1967г. Начальник отдела "Демографии и трудовых ресурсов" Института экономики.

1970-1975гг. Преподаватель Ереванского сельскохозяйственного института.

1970г. Награжден "Юбилейной" медалью.

- Член армянской делегации на Международной конференции экономистов в Ленинграде.

1973г. Награжден "Почетной грамотой" АН АрмССР.

- Участвовал на Международной конференции Академий наук СССР и Украинской ССР в Киеве.

1974г. Награжден:

- нагрудным знаком Президиума АН и Совпрофа АрмССР - "Победитель социалистического соревнования 1973г.".

- "Юбилейной" почетной грамотой коллегии Госплана СССР.

С 1974г. Член научно-редакционной коллегии отдела экономики Армянской энциклопедии.

- Делегат Международной конференции экономистов в Будапеште.

1975г. Присуждена ученая степень доктора экономических наук.

1975-1977гг. Исполняющий обязанности профессора в Ереванском институте народного хозяйства.

1976г. Делегат Всесоюзной научной конференции в Алхабаде.

1976г., 1978г. и 1980г. Научные доклады в Институте центральной экономики АН ГДР, Лейпцигском Институте экономики, Дрезденском Институте труда и Университете им.Гумбольдта в Берлине.

1977г. Присвоено ученое звание профессора.

1978г. Делегат Московской Всесоюзной научно-практической конференции.

- Награжден:

- "Почетной грамотой" АН Арм.ССР.

- "Почетной грамотой" Всесоюзного общества "Знание".

1978-1988гг. Профессор Ереванского художественно-театрального института.

1980г. Избран заведующим Ереванского отделения экономики общества "Знание".

1980-1991гг. Член проблемного совета демографии и трудовых ресурсов Института экономики АН СССР.

1982г. Избран членом-корреспондентом АН Арм.ССР.

1983г. Награжден "Почетной грамотой" Президиума Центрального правления Всесоюзного общества "Знание".

- Заместитель директора Института экономики АН АрмССР.

1985г. Присужден диплом Центрального правления Научно-экономического общества СССР коллективу авторов в составе: В.Ходжабекян, Ю.Вазе, Р.Шефер за монографию "Проблемы демографии и воспроизводства трудовых ресурсов", представленную на Всесоюзный конкурс 1984г. на лучшую опубликованную в печати работу в области реализации резервов экономии труда.

1985-1993гг. Заместитель председателя общества "Знание".

1986г. Участник Всесоюзной научно-практической конференции в Москве.

1987г. Участвовал на:

- Научно-практической конференции экономистов в Тбилиси и Баку - с индийскими экономистами.
- Всесоюзной научно-практической конференции (Москва-Сузdalь).

1988г. Участник:

- Международной научной конференции экономистов в Дели.

- Всесоюзной научной конференции в Дилижане.

1989г. Награжден "Почетной грамотой" Президиума Центрального правления армянского общества "Знание".

1989-1994гт. Профессор Ереванского института народного хозяйства.

1990г. Научные доклады в армянской общине Сиднея.

С 1990г. Член научно-редакционного совета Краткой армянской энциклопедии.

1994г. Избран академиком НАН РА.

- Участник Международной научной конференции экономистов в Тегеране.

1995г. Участник Международной научной сессии в Москве.

1998г. Участвовал на:

- Третьей Международной научной конференции "Женщина и общество" в Цахкадзоре.

- Международной экономической научной сессии в Москве.

1998-2002гг. Член научно-практического совета Министерства социального обеспечения РА.

1999г. Избран директором Института экономики НАН РА.

- Удостоен звания "Человек года 1998" Американского биографического института.

- Избран академиком Международной Академии наук в области проблем Национальной безопасности.

- Избран председателем проблемного ученого совета философии, экономики и права гуманитарного отделения НАН РА.

Участвовал на:

- Международной научно-практической конференции Президиума АН РФ в Москве.

- Второй Международной сессии по вопросам вынужденной миграции независимого исследовательского совета стран СНГ и Балтии.

1999-2002гг. Член специализированного совета Управления по миграции и беженцам при Правительстве РА.

- Представитель ассоциированного члена - Института экономики НАН РА – в редакционной коллегии Международного журнала "Проблемы теории и практики управления".

2003г. Участник правительской научно-практической сессии в Москве.

- Награжден медалью "Мовсес Хоренаци".

ԿՅԱՆՔԻ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ
ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՍ ԱԿՆԱՐԿ

Դայաստանի Դանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Վաղինակ Եղիշի Խոջաբեկյանը Դայաստանում, ԱՊՀ Երևանի բարձրագույն սահմաններից դուրս լայն ճանաչում ստացած անվանի տնտեսագետ-գիտնականներից է: Նա անցել է քեղմնավոր կյանքի ուղի, շուրջ հինգ տասնամյակ գրադպում է տնտեսագիտությամբ և տնտեսագիտական կառուերի դաստիարակման գործով:

Վ. Ե. Խոջաբեկյանը ծնվել է 1929թ. մարտի 2-ին Դայաստանի Դանրապետության Վարդենիսի շրջանի Խաչաղոյուր գյուղում։ Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում։ 1946թ.՝ Ազարիշել է Վարդենիսի միջնակարգ դպրոցը։ 1954թ.՝ գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը։ Մեկ տարի անց ընդունվել և 1959թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ տնտեսագիտության գծով։ Տնտեսագիտության թեկնածուի գիտական թեզը պաշտպանել է 1963թ., դոկտորականը՝ 1975թ.։ 1966թ. ստացել է ավագ գիտաշխատողի, 1977թ.՝ պրոֆեսորի գիտական կոչումներ։ 1982թ. նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1994թ.՝ ակադեմիկոս, 1999թ.՝ ազգային անվտանգության պրոբլեմների գծով գիտությունների Սիօնագային ակադեմիայի ականավորիկոս։

ՀՅՈՒՅՍ Ապահանգամականը, նկատի ունեմալով Վ.Խոջարեևյանի ախժանիքները, գործ է. «Դժվար է գերազանցահատել հայ տնտեսագիտական մտքի զարգացմանը բերած նրա վաստակը, գիտնական քաղաքացու նրա անհանգիստ, համառ զգությունը՝ գիտական ծանրակշիռ ու-

սումնասիրությունները ծառայեցնել իր ժողովրդին և հայրենիքին»:

Վ.Ե.Խոջաբեկյանը մեծ ավանդ ունի տնտեսագիտության զարգացման գործում: Նա 327 հրատարակված աշխատությունների, այդ թվում ավելի քան մեկ տասնյակ մենագրությունների, հարյուրավոր հոդվածների, խմբագրված գրքերի և 160 չիրատարակված գիտական գեկուցումների, գեկուցագրերի, ելույթների և այլ արխիվային նյութերի հեղինակ է: Աշխատությունները հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով լույս են ընծայվել Երևանում, Մոսկվայում, Կիևում, Բեռլինում, Նյու Յորքում, Փարիզում, Աթենքում, Դելիում, Թեհրանում, Վիեննայում, Թրիլիսիում և այլուր՝ նրան բերելով արժանի ճանաչում մի շարք արտասահմանյան երկրներում: 1970-ականներից մինչև օրս նա գիտական բանախոսություններով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Երևանում, Մոսկվայում, Բեռլինում, Լենինգրադում, Սիդնեյում, Կիևում, Բուլղապետում, Աթենքում, Դելիում, Թեհրանում, Վիեննայում, Լայպցիգում, Դրեզդենում, Ալմա Աբայում, Թրիլիսիում, Տաշքենդում, Աշխարադում, Օրենբուրգում և այլուր), որոնք զետեղվել են միջազգային և հայրենական պարբերականներում:

Վ.Խոջաբեկյանի առաջին աշխատությունները (1950-ականների վերջերից) նվիրված են աշխատանքի արտադրողականության տեսական հարցերին, ներարտադրական ռեզերվների բացահայտմանը և գնահատմանը, դրանց դասակարգմանը, արդյունաբերական ձեռնարկությունների ռեզերվների ի հայտ բերմանը և օգտագործմանը: Այդ աշխատություններում տնտեսագիտական տեսական ընդհանրացումները գուգակցվում են փաստացի նյութերի գիտական վերլուծության, դրանց ընդհանրացման և գործնական առաջարկությունների հետ: Լինելով այդ հիմնախնդրին նվիրված անդրամիկ հրապարակումները՝ դրանք արժանացել են գիտական մամուլի բարձր

գնահատականին, իսկ գիտականորեն հիմնավորված հանձնարարականները ներդրվել են արտադրության մեջ:

1960-ական թվականների կեսերից Դայաստանի բնակչության և նրա աշխատանքային ռեսուրսների վերարտադրության հիմնահարցերը դաբնում են տնտեսագիտության առանցքային խնդիրներից մեկը և այսօր էլ մնում են այդպիսին: Տասնամյակների ընթացքում Վ. Խոջաբեկյանի ուսումնասիրությունների շրջանակը անընդհատ ընդլայնվում է: Դիմնահարցն ամփոփում է իրար հետ շաղկապված ու տրամաբանական հաջորդականությամբ մինյանց լրացնող բազմաթիվ հրատարակված ու չհրատարակված ուսումնասիրություններ՝ ի մի բերելով Դայաստանի բնակչության և նրա աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, գրադացման ամբողջական պատկերը: Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել նաև հեռանկարային կանխատեսումներին: Ուսումնասիրությունները նվիրված են ժողովրդագրական քաղաքականության հիմնահարցերին. դրանց բազմաթիվ նոր հարցադրումները, մտահղացումները, առաջարկությունները և լուծումները տեղ են գտել հանրապետական և միջազգային հրատարակություններում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը Վ. Խոջաբեկյանի 70-ամյակի առթիվ հղած ուղերձում գրում է. «Դիրավի, դժվար է գերազանահատել Ձեր ծառայությունները տնտեսագիտության տեսության ու պրակտիկայի զարգացման գործում: Ավարտելով Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ Դուք անմնացորդ նվիրվեցիք մեր հանրապետության այդ հույժ կարևոր ոլորտի գիտական խնդիրների ուսումնասիրությանը՝ հեղինակելով հիմնարար աշխատություններ, որոնց հատուկ են արդիական շունչը, գիտական նորույթը, ապագան կանխատեսելու ոգին, հիմնավոր լուծումներ պահանջող եզրահանգումները: ...Մեր երկրի գիտական հասարակությունը գոհունակությամբ է նշում Ձեր գիտական խո-

շոր ծեղթերումները Հայաստանի բնակչության և աշխատանքային ռեսուլսների վերարտադրության, երկարատև հեռանկարում դրանց միտումների բացահայտման, զբաղվածության օրինաչափությունների ընդհանրացման, արդի փուլում աշխատանքային շուկայի ձևավորման, քաղաքակենտրոնացման, ժողովրդագրության ու սոցիալ-տնտեսական կանխատեսման, աղետի գոտում և Արցախում ժողովրդագրական քաղաքականության հիմնախնդիրների հետազոտության ասպարեզում:

Դուք բոլորիս զարմացնում եք ոչ միայն Զեր գիտական մտքի արգասավորությամբ: Մեզ հիացնում է Զեր գիտակազմակերպական ու մանկավարժական անխոնջ եռանդը: Այսօր Զեզ երախտագիտությամբ է նայում երիտասարդների այն բանակը, որի համար Դուք եղել եք իսկական ուսուցիչ, լավագույն դեկավար, և ով արդյունավետ գործունեություն է ծավալել ինչպես գիտության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսագիտական կյանքի տարրեր ոլորտներում»:

Ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործունների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա Վ.Խոջաբեկյանը կանխատեսել է Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը երկարատև հեռանկարի տարրեր փուլերի համար: Դրանք նաև նաև պատկերը կանխատեսել է Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը 1966-1985թթ., 1970-2000թթ., 1979-2016թթ., ինչպես նաև 2000 թվականից մինչև 2050-2060-ական թվականների ժամանակահատվածները:

1968թ. Մոսկվայում ռուսերեն հրատարակվեց «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուլսների օգտագործումը՝ 1966-1985թթ. Հայկական ԽՍՀ-ում» տեսական հետաքրքրություն և կիրառական կարևոր նշանակություն ունեցող եռահատոր աշխատությունը (Վ.Խոջաբեկյանի գիտական դեկավարությամբ և անմիջական նաև նաև պատկերը կազմությամբ): Դրա-

նում առաջին անգամ գիտականորեն կանխատեսվել են հանրապետության բնակչության ու աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը երկարատև հեռանկարում, իիմնավորվել են աշխատանքային ռեսուրսների կազմավորման և պատրաստման ուղիները, մշակվել աշխատանքային ռեսուրսների օպտիմալ բաշխման համապատասխան մեթոդիկա և նորմատիվներ, կազմվել են աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռներ՝ հնգամյակությունը, հեռանկարային տարիների համար: Պատշաճորեն զնահատելով կատարվածը՝ ՀՀ ԳԱԱ նախագահությունը նշված աշխատությունը որակել է (1969թ.) որպես «տեսական մեծ հետաքրքրություն և կիրառական կարևոր նշանակություն ունեցող» ուսումնասիրություն: Ոռոշվել է «...., աշխատանքը ներկայացնել ՀԽՍԴ պետպանին՝ երաշխավորելով նրա օգտագործումը պլանավորման ժամանակ՝ հանրապետության ժողովներում հեռանկարում» (ՀՀ ԳԱԱ նախագահության նիստի արձանագրություն, Երևան, 1969, №9 (602), էջ 46, 47):

Հետագա մենագրություններում գիտմականը, ընդհանրացնելով անցյալի փորձը և երկարատև հեռանկարում հանրապետության բնակչության, նրա սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքները, ծեռնամուխ է եղել նորագույն հիմնահարցերի և ավելի լայն ընդգրկմամբ աշխատանքների կատարմանը: Մասնավորապես 1960-1970-ականներին երկու ստվարածավալ մենագրություններում ընդհանրացրել է միմյանց լրացնող և օժանդակող երկու կարևոր ասպարեզներ:

«Դայլկական ԽԽՍԴ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները» մենագրությունը նվիրված է ժողովրդագրության տեսական ու գործնական հարցերին (մինչև 2000թ. բնակչության և աշխատանքային ռեսուրսների հեռանկարային վերարտադրության ուղիների բացահայտմանն ու դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմանը, երկարատև հեռանկարում հանրապետության սոցիալ-

տնտեսական զարգացման, ժողոտնտեսության ճյուղային և ներջուղային կառուցվածքի կատարելագործման խնդիրներին, ինչպես նաև ժողովրդական տնտեսության կողմից ներկայացվող պահանջների համեմատ տնտեսական շրջանի համրային արտադրության և չհամրայնացված աշխատանքի ոլորտների գրադարձության սահմանների օրոշմանը):

Գիտական եզրահանգումները և առաջարկությունները պետական պլանային մարմիններին ուղղորդել են որոշելու ժողովրդագրության և ժողովրդական տնտեսության զարգացման ընթացքը:

«Դայաստանի բնակչությունը և նրա գրադարձությունը (1828-1978թթ.)» հաջորդ մենագրությունում Արևելյան Դայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու պատմական նշանակության բացահայտման ընդհանուր ֆոնի վրա պատմատնտեսագիտական գրականության մեջ առաջին անգամ քննարկվում են Դայաստանի բնակչության վերարտադրության առանձնահատկությունները, գրադարձության բնույթի փոփոխությունները, նրա սոցիալ-տնտեսական զարգացման պատմական ընթացքի 150-ամյա պատկերը, Խորհրդային Դայաստանում բնակչության համահավաքը, գրադարձության էվոլյուցիան և այլ հարցեր:

Այդպիսով՝ այդ եզրահանգումները, որպես գիտնականի մտավոր աշխատանքի արգասիք, բացահայտման տասնամյակների վաղեմություն ունեն:

1980-ական թթ. Վ. Խոջարելյանը ձեռնարկել է մասշտաբների և բովանդակության տեսակետից մի եզակի գիտական մշակում, այն է՝ 1979-2016թթ. հանրապետության, դրա բոլոր քաղաքների, շրջանների և գյուղական վայրերի բնակչության (ընդամենը 158 միավոր) հեռանկարային թվի կանխատեսման աշխատանքները: Դրանք խմբավորվել են ըստ վարչական ու տնտեսական շրջանների, առանձին քաղաքների ու գյուղերի: Առաջին անգամ բնակչությունը կանխատեսելիս կոնկրետ գումա-

րելիներից ստացվել է ընդհանուր հանրապետականը՝ քաղաքային և գյուղական կտրվածքով: Երկարատև հեռանկարի յուրաքանչյուր տարվա համար բնակչությունը կանխատեսվել է ըստ սեօի, տարիքի, աշխատունակության, աշխատանքային տարիք մուտք գործելու, թոշակառու տարիք թևակոխելու և բազմաթիվ այլ հատկանիշներով: Նման կտրվածքով աշխատանք առաջին անգամ է կատարվել: Բնակչությունը կանխատեսվել է ըստ տարիների՝ 0-ից մինչև 100 տարեկան: Կանխատեսվել են տարեկան ծնունդը, մասը, 15-49 տարեկան կանանց հաշվով ծնվածների միջին տարեկան թիվը՝ ըստ կանանց տարիքային խմբերի, մեխանիկական տեղաշարժերը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը 1987թ. մարտին հատուկ նիստով ըստ արժանվույն գնահատել է տվյալ աշխատանքի «տեսական, գիտական, գաղափարական և ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունեցող բարձր մակարդակը»:

Լայն է Վ.Ե.Խոջաբեկյանի՝ բնակչության տարաբնակեցման և քաղաքակենտրոնացման ուսումնասիրությունների շրջանակը: Բնորոշն այն է, որ դրանցում լայնորեն օգտագործվել են սոցիոլոգիական հետազոտությունների (մասնակի և զանգվածային հարցաթերթիկային հարցումներ) նյութերը: Դրանով իսկ հիմնավորվել են փոքր քաղաքների զարգացման ուղղությունները: Առաջին անգամ բացահայտվել է անձնական օժանդակ տնտեսության էությունը: Տատուկ ուշադրություն է նվիրվել նաև աշխատումի հոսունության, երիտասարդության մասնագիտական կողմնորոշման, ընտանիքի, ժողովրդական գործնքացների և դրանց կրած փոփոխությունների պատճառների բացահայտման տարաբնույթ խնդիրների լուծմանը: (Ցավոք, կյանքում դրանք պատշաճ կիրառում չեն ստացել):

1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը Վ.Խոջաբեկյանին հարկադրեց գիտական խնդիրները ներկայացնել նորովի՝ հիմնավորելով լայնանասշտաբ ժողովրդագ-

րական քաղաքականություն կենսագործելու անհրաժեշտությունը: «Աղետ և մտահոգություն» մենագրության մեջ քացահայտվել են երկրաշարժի ժողովրդագրական հետևանքները, դրանց ազդեցությունը աղետի գոտում, հատկապես նրա էպիկենտրոնում: Վ.Խոջաբեկյանը հանդես եկավ նոր խոսքով ու գիտական մտահղացումներով՝ աղետյալ շրջաններում ստեղծված արտակարգ իրավիճակի ժողովրդագրական հետևանքները հաղթահարելու քաղաքականությամբ և սոցիալական բազմաբնույթ խնդիրները լուծելու հիմնարար առաջարկություններով: Եվ պատահական չե, որ 1988թ. դեկտեմբերի 16-ին ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում այդ հարցին նվիրված նրա բոլոր առաջարկությունները արժանացան ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն.Ռիժկովի հավանությանը:

Վ.Խոջաբեկյանի «Արցախը փորձության ժամին» (1991թ.) մենագրությունը նվիրված է Աղրբեջանում և Լեռնային Ղարաբաղում իրականացվող հայաթափության քաղաքականության ծաղկմանը: Այդ քաղաքականությունը տասնամյակներ շարունակ ծրագրվել և իրագործվում էր Աղրբեջանում՝ պետական նակարդակով: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում արխիվային նորահայտ նյութեր Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի և ընդհանրապես Աղրբեջանում իրագործվող հայաթափության վերաբերյալ՝ 1920-ական թվականներից ցայսօր ներառյալ Սումգայիթի, Կիրովարադի, Բաքվի և Աղրբեջանի այլ վայրերի հայաթափության և ցեղասպանության շարունակական իրագործումը:

Դանրապետության կառավարությանն են ներկայացվել Աղրբեջանից բռնագաղթված հայերի տեղաբաշխման, տարաբնակեցման, գրադարձության, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական անհետաձգելի խնդիրներին վերաբերող Վ.Խոջաբեկյանի գիտական գեկուցագրերը և իրապարակումները: Դրանցում առաջ քաշված հարցերն ունեն խիստ արդիական նշանակություն և իրենց արտա-

հայտությունն են գտել 1993թ. մշակված «Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի անրացման» նպատակային ծրագրում: Մշակվել են սահմանամերձ շրջանների բնակչության արտագաղթը մեղմելու և տարարնակեցման հարցերը: Վիճակագրական փաստերի հիման վրա մերկացվել են ադրբեջանցի «զիտնականների» կողմից Ադրբեջանում և Հայաստանում ժողովրդագրական իրական գործընթացները (սկսած XIX-րդ դարի վերջերից) նենգափոխելու բոլոր փորձերը:

Վերջին տարիների իր հրապարակումներով Վ. Խոջաբեկյանն ուղղակի ահազանգում է բնակչության նվազման միտումների մասին: Այդ կապակցությամբ Վ. Խոջաբեկյանը տալիս է իր եզրահանգումները Հայաստանի Հանրապետության բնակչությունը գոնե ներկա մակարդակով կայուն բնագծերում պահելու վերաբերյալ:

Անհրաժեշտ է, որ համապատասխան մարմինները կառավարության պահանջով և օժանդակությամբ վերստին իրենց ծեռքի տակ ունենան այդ ուսումնասիրությունների՝ արդյունքները, և ամեն ջանք գործադրեն՝ նպաստելու բնակչության կայուն աճը ապահովելու համար:

Մի շարք օբյեկտիվ դրդապատճառներից բացի, աննախընթաց արտագաղթը դիտվում է նաև որպես ՀՀԸ-ի սադրիչ քաղաքականության, հատկապես 1991-1995թթ. նրանց կողմից հրահրված արիեստական էներգետիկ ճգնաժամի հետևանք: Երկիրը շատ թանկ վճարեց՝ մեծապես վճասելով ազգի գենոֆոննդ:

Այսօր տնտեսագետի աշխատություններում, բնականաբար, համակերպված խաղաղություն չէ, այլ անցյալի վերհուշ, տեսակետների ընդհարում, հաստատում ու մերժում, ապրած ժամանակի դեպքերին զուգընթաց՝ նաև ըմբոստացում... Ամբողջ կես դար:

Բոլորովին վերջերս Վ. Խոջաբեկյանի «Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում» լույս ընծայված աշխատությունում (1998թ.) արդի՝

փլուզման քննական և քննադատական վերլուծությունն է, ծանր դրությունից ելքի ուղիների որոնումն ու ճշգրտումը: Գրքում ներկա ժամանակի և հոգսերն են, և ժամանակին տրվող պատասխանները, կիրառելի խորհուրդներն ու ուղենիշները: Այդ գրքում և նախընթաց տարիների մյուս հրապարակումներում (1991թ. սկսած), հեղինակը, քննադատելով իշխանությունների ազգային քաղաքականությունը, հանդես եկավ հողի, արտադրության միջոցների անժամանակ, հապշտապ և հախուռն մասնավորեցման դեմ: Նա առաջիններից մեկն էր (1990թ. աշնանից սկսած), որ խանձարուրի մեջ նկատեց և իր հրապարակումներում ու հրապարակախոսական ելույթներում, երկրի գլուխ կանգնած առաջին դեմքերի ներկայությամբ պախարակեց այդ քաղաքականության ողջ ազգադավ եռթյունը: Ըստ որում, ի պատասխան աղքատության վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից վերջերս ԳԱԱ-ին ներկայացվող գրության, Վ. Խոջարեևյանը համապատասխան գեկուցագրով աղքատությունը բացատրում է թերզբաղվածությամբ, հիմնավորելով՝ վերջինիս հաղթահարման ուղիները:

ՀՀՇ-ականների հետևողական ջանքերով ժողովրդական զանգվածի սնանկացման հաշվին «ծնվեցին» նորելուկ պորտաքանույթ «միլիոնատերեր»: Դեղինակը համոզված է, որ, այնուամենայնիվ, բացառապես տնտեսական ծիշտ քաղաքականություն կիրառելու դեպքում հնարավոր կլինի սկսված թալանից հետո անգամ փրկել տնտեսությունը: Նա կարևոր պայման է համարում այն, որ երկրի քաղաքական վերակառուցումը վերստին չգուգակցվի տնտեսության քայլայմամբ:

Վերջին տասնամյակում հրատարակված ուսումնասիրություններում շեշտադրվում են զբաղվածության և շուկայական էկոնոմիկայի ձևակորման հարցերը: Դիմնավորվում է շուկայական էկոնոմիկայի պետական վերահսկման և կարգավորիչ դերի անհրաժեշտությունը: Բայց շուկան հիմնականում պետության կողմից առայժմ

չի վերահսկվում և կրում է անկազմակերպ ու ոչ քաղաքակիրք բնույթ: Խնդիրը քաղաքակիրք շուկայի ծևավորումն է:

Վ.Խոջաբեկյանը մեծ տեղ է հատկացնում անցման շրջանում Դայաստանում աշխատանքի շուկան կարգավորող տնտեսական մեխանիզմների մշակմանը: Բացահայտվում են երկիրը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու ուղիները: Առաջին անգամ ամրողական տեսքով վերլուծվում և ընդհանրացվում է Դայաստանում աշխատանքի շուկայի ծևավորման իրավիճակը, առաջ է քաշվում անցման շրջանում շուկայի կարգավորման անհրաժեշտությունը: Ենշտադրվում է մշակող արդյունաբերության այնպիսի աշխատատար ճյուղերի զարգացման աճող դերի անհրաժեշտությունը, որոնք պահանջում են բարձր որակավորման աշխատուժի գործադրում, չեն աղտոտում շրջակա միջավայրը, արդյունքները ֆոնդատար ու ջրատար չեն, ունեն բարձր արժեք, թերև քաշ, փոքր չափեր, արտահանության մեջ ասպարեզ, ենթակա են տրանսպորտային դյուրին փոխադրումների:

Վ.Խոջաբեկյանը արդյունաբերությանը գուգընթաց մեծ ուշադրություն է նվիրել եներգետիկային, գյուղատնտեսությանը, նյութական արտադրության այլ ճյուղերին, ծառայությունների ոլորտին, գիտակրթական, առողջապահական համակարգերի զարգացման գերակայությանը, արտաքին աշխարհի հետ տնտեսական փոխսերտաճման և գրադպածության հարցերին:

Ազրարային քաղաքականության վերաբերյալ մշակումների համատեքստում բացահայտվել են գյուղատնտեսության գրադպածության ծևավորման հիմնական ուղղությունները, իրական գրադպածություն ապահովելու նախադրյալներն ու պայմանները, հիմնավորվել են արդի փուլում գյուղատնտեսության մեջ հայրենական արտադրուների նկատմամբ պետական հովանավորման, խթանման և մրցունակության բարձրացման քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Գյուղատնտե-

սության մեջ արդյունավետ գքաղվածություն ծևավորելու իմաստով ուշադրություն է նվիրվել արտաքին աշխարհի հետ Հայաստանի գյուղատնտեսության տնտեսական ինստեգրացիայի կառավարման հարցերին: Բացահայտվել են գյուղում տեղի ունեցող արտագաղթը մեղմելու հնարավորությունները:

Վ.Խոջաբեկյանի «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին» արժեքավոր մենագրությունը նվիրված է բնակչության աճի և տեղաշարժերի, երնոժողովրդագրական գործնքացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը (հրատարակվել է 2001թ., Վերահրատարակվել 2002թ.): Այն ընդգրկում է Անդրկովկասի, Արևելյան Հայաստանի և Հայաստանի Հանրապետության շուրջ երեք դարերի պատմությունը: Աշխատանքը հայագիտական ուսումնասիրություն է ու նվիրված է ժողովրդագրության, պատմության և ժողովրդական տնտեսության հիմնախնդիրների համապարփակ քննարկմանը:

Առաջին. ուշադրության առանցքը Անդրկովկասի՝ բուն Երևանի, Գանձակի, Թբիլիսիի, Բաքվի նահանգների, Կարսի մարզի, հատկապես նրանց խոշոր քաղաքների հայ բնակչության աճի և գաղթի հարցերն են: Վկայակոչվում է, որ 1827 թվականից հայերը տարածված էին Անդրկովկասով մեկ և 1886-1914թթ. կազմում էին նրա ընդհանուր բնակչության 22,5-23,0, իսկ քաղաքներում շուրջ 40 տոկոսը: Վեր է հանվում ինքնագործ բնակչության գրադմունքի բնույթը (Անդրկովկասի նահանգների մեծ մասում մասնավորապես իշխել է ագրարային գրադապածությունը) և բացահայտվում է Թբիլիսիի, Բաքվի ու Գանձակի հայերի մեծ տոկոսի առկայությունը արդյունաբերության և առևտության բնագավառներում:

Եղիսոռոռ. առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել Երևանի նահանգի, Կարսի մարզի, Սուրբալուի, Լեռնային Ղարաբաղի, Գարդմանաց, Զանգեզուրի, Գուգա-

րաց և Զավախսքի գավառների բնակչության տեղաշարժերի որպես Արևելյան Հայաստանի մի ամբողջական մաս:

Եղողող. չափազանց հանգամանալից քննարկման է արժանանում ներկայիս ՀՀ բնակչության ընդհանուր համայնապատկերը՝ 1920թ. մինչև օրս: Մանրազնին մեկնարանությամբ բացահայտվում է Արևմտյան Հայաստանի երեք միլիոնանոց հայ ժողովրդի շուրջ մեկ ու կես միլիոնի ցեղասպանության գոհ դառնալու, իսկ մնացածը՝ գրեթե ամբողջությամբ մազապուրծ աշխարհի տարբեր ծագերում և Արևելյան Հայաստանում ապաստանելու ընթացքը:

Քննական վերլուծության միջոցով մեծ տեղ է հատկացվում Հայրենական մեծ պատերազմին նախորդող և հետպատերազմյան տարիների ՀՀ բարձր ծննդի, 1960-ի կեսերի, 1970-ականի կեսերի ծննդի և մահացության խիստ նվազման (աշխարհում բնութագրվում է ամենացածր մահացությամբ), վաղ ամուսնության և հետագայում նրա բարձր գործակցի գոյացման ու ծննդաբերության աճի, առանձին փուլերում ծննդի և ամուսնության հարակիոփոխ անկմանը: Եթե 1960թ. ծնվել է 75 հազար, իսկ 1970թ.՝ 55,7 հազար, ապա 1986թ. ծնվել է 81,2 հազար երեխա:

Վ.Խոջաբեկյանը մեծ ուշադրություն է նվիրում արդի փուլում բնակչության ծննդի նվազման և մահացության աճի հիմնախնդիրներին: Դրանք քննարկվում են որպես հանրապետության տնտեսական, աշխարհաքաղաքական կյանքում մեր օրերում դրսևորվող փոփոխությունների անմիջական արձագանք:

Մենագրության չորրորդ փուլն ընդգրկում է ժողովրդագրությունը երրորդ հազարամյակի շեմին: Կանխատեսվում են հանրապետության բնակչության, երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի հիմնական ուղղությունները և շեշտադրվում է Հայաստանի վարընթացի, բնակչության աճի անկումը թուլացնելու հրամայականը:

Առաջին կարևորվել է առաջիկա 15-20 տարիների ընթացքում հիմնավոր ժողովրդագրական քաղաքականության հանգամանորեն մշակումը և կիրառումը, որը դառնալու է անհրաժեշտություն:

Երևոնոց. հետաքրքիր են 2000-2060թթ. բնակչության կանխատեսման հիմնահարցերը: Ուսումնասիրությունը հանգեցնում է այն հետևողաբար աճի միջև XXI դարի կեսերը ծնունդը կնվազի, թեև առանձին փուլերում աննշան չափով կարող է ավելանալ: Դիմնավոր կանխատեսումներով բացահայտվում է XXI դարի առաջին, երրորդ, հինգերորդ տասնամյակներում ծննդի փոփոխական ելաջներով փոքր-ինչ աշխուժանալը: Այնուհանդերձ, ինչպես հիմնավորված է, բնակչության աճի տեմպերը կնվազեն, այն կնվազի նաև մահացությունն աստիճանաբար ավելանալու, հետագայում վերջինիս գործակիցը սրընթաց բարձրանալու հետևանքով, թեև մանկամահացությունը կիջնի և կիասնի իր նվազագույն սահմանին:

Դայաստանը կանգնած է բնակչության գաղթի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականություն մշակելու փաստի դեմ հանդիման:

Ըստ Վ. Խոջաբեկյանի՝ ժամանակավոր արտագաղթ անվերադարձ գաղթի հիմք է դառնում: Վերադարձի խնդիրը առնչվում է ոչ միայն մայր հայրենիքում տեղի ունեցող դրական կամ բացասական տեղաշարժերի, այլև արտագաղթողների սերտաճման՝ լեզվի, ազգային մշակույթի, արվեստի, հոգեբանական կերտվածքի և ազգային այլ արժեքների կորստի ու նոր արժեքների ձևավորման հետ, որը ներգաղթը խոչընդոտելու կարևոր նախապայման է:

Ուսումնասիրության նպատակն արտաքին գաղթը մեղմելու ուղիների կանխատեսումն է:

Նա կարևորելով անդրադառնում է գաղթի հնարավոր միտումների կանխատեսմանը երրորդ հազարամյակի շեմին: Անժխտելի է Վ. Խոջաբեկյանի գործունեությունը

հայ ժողովրդի հետագա զարգացման և հարատեսության հարցում:

Վ.Խոջաբեկյանի ուսումնասիրությունները հանգեցնում են այն եզրակացության, որ XXI դարի շեմին Հայաստանից որպես բնակչության արտագաղթի որոշիչ պայման կարող են հանդես գալ սպասվելիք ժողովրդագրական իրավիճակը. շուկայական տնտեսության ընթացքի ծավալումը, հասարակական արտադրության բոլոր ճյուղերի ինտենսիվ զարգացման հնարավորությունների օգտագործումը. գիտատեխնիկական առաջընթացի օբյեկտիվ ընթացքը, այդ ասպարեզում համաշխարհային ստանդարտներին մոտենալու ծգությունը, ծեռնարկությունների տեխնոլոգիական վերազինման, դրանց վերահարմարեցման, արդիականացման և ազգային տնտեսության ճյուղային կազմի արմատական փոփոխության գործընթացները, սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային անհամամասնությունների համահարթումը, ԴՇ բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների թվի օրավոր աճի կարգավորումը և այլն:

Ըստ Վ.Խոջաբեկյանի՝ մոտ ապագայում արտաքին աշխարհից Հայաստանի Հանրապետության բնակչության ներգաղթի միտումները կարող են կանխորոշվել Հայաստանում սոցիալ-տնտեսական լարվածության տևականությունը աստիճանաբար հաղթահարելով, դարձադիւն հականարտությունը վերջնականապես հօգուտ Հայաստանի Հանրապետության լուծելով, արտաքին աշխարհում հայ անլեզգալ գաղթականների նկատմամբ գաղթի քաղաքականության կիրառման ընթացքով, լեզար գաղթականների աշխատանքային և սոցիալական ապահովածության աստիճանով, ազգային և սոցիալական խորականության որևէ կարգի դրսերումներով, որևէ ժամանակահատվածում համաշխարհային տնտեսական ճգնաժամի երևան գալով և այլն: Չափազանց կարևորվում է արտասահմանում հայ լեզգալ և անլեզգալ գաղթականների վաստակի չափը:

Դայաստանի շահերը թելադրում են գաղթի ընթացքում այսուհետև ընդգրկվել արտաքին աշխատանքի շուկայում և շուկայի հետ փոխսերտաճել պետական հիմունքներով։ Դա աշխատանքի շուկայի գերլարված իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկն է, որը հնարավորություն կընծեռի մեղմելու գործազրկությունը, բարձրացնելու աշխատուժի արժեքը, վերացնելու աղքատությունը, միջին խավ ծևավորելու և դրանցով իսկ արտագաղթը չափավորելու, հետևաբար ծնունդը ավելացնելու համար։

Մենագրությունը հարուստ է արտագաղթը մեղմելու կանխատեսումներով և լուծումներով։

Այդուհանդերձ, բնակչության պատմական գարգացման, նրա գաղթի ընթացքը, սկսած XIX դարից մինչև մեր օրերը և XXI դարի նախափուլի միտումները, որպես ընդգրկուն մենագրություն, ընթերցողների ուշադրությանն առաջին անգամ է ներկայացվում։

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում Վ.Խոջաբեկյանի ղեկավարությամբ մշակվել են նաև մասնագիտական այլ հիմնահարցեր, լույս են տեսել կոլեկտիվ ուսումնասիրություններ, խմբագրվել են թեմատիկ ժողովածուներ։

Նրա գործունեությանը բնորոշ է նաև այլ գիտական կազմակերպությունների հետ համագործակցությունը։ Տարիների ընթացքում՝ 1963-1975թթ. աշխատանքները կոորդինացվում էին ԽՍՀՄ Պետպլանի, 1975-1985թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ, 1976-1980թթ.՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ԳԱ Կենտրոնական տնտեսագիտության, 1990թ.՝ ընթացքում Ռուսաստանի Դաշնության ԳԱ տնտեսագիտական, առաջին հերթին ԳԱ աշխատանքի և զբաղվածության տնտեսագիտության ինստիտուտների, ինչպես նաև Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊԳ) և Բալթյան երկրների հետ։ Իր ժամանակին Վ.-Խոջաբեկյանը խորհրդային Միության ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի «ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների» պրոբլեմային խորհրդի անդամ

էր: Գիտական համագործակցությունը վերոհիշյալ օղակ-ների հետ շարունակվում է ընդգրկելով նաև ներկա գաղ-թի գործընթացի համատեղ ուսումնասիրությունը: ՀՀ - ԳԱԱ-ի և ԳԴՐ գիտությունների ակադեմիաների միջև կնքված երկկողմանի համաձայնագրով 1976-1980թթ. ա-վարտված աշխատանքի արդյունքներն արժանացել են երկու ակադեմիաների բարձր գնահատականին: ԳԴՐ - կենտրոնական տնտեսագիտության ինստիտուտի աշխա-տակիցների և Վ.Խոջաբեկյանի հետ համատեղ ավարտ-ված գիտական ուսումնասիրությունը «Ժողովրդագրութ-յան հիմնախնդիրները և աշխատանքային ռեսուլսների վերարտադրությունը» վերտառությամբ, 1983թ. հրատա-րակվել է ռուսերեն: 1984թ. այն արժանացել է ԽՍՀՄ գի-տատնտեսագիտական վարչության նախագահության համամիութենական մրցանակաբաշխության դիալլումին: Խոջաբեկյանի հեղինակած բաժինը 1983թ. առանձին գրքով լույս է տեսել Բեռլինում գերմաներեն:

Նկատենք և այն, որ Վ.Ե.Խոջաբեկյանի գիտահե-տազոտական աշխատանքի արդյունքները հաճախ են ե-ղել ՀՀ ԳԱԱ նախագահության ուշադրության կենտրո-նում: Նրա ուսումնասիրությունների արդյունքները և եզ-րահանգումները, երաշխավորագրերը, հանճնարարա-կաններն ու հիմնավորումները ներկայացվել են ԳԱԱ տա-րեկան ժողովում (1987թ.), քննարկվել են ԳԱԱ նախագա-հության նիստերում (1969թ., 1987թ., 1994թ., 1999թ., 2001թ. և այն), բազմից հասարակագիտական, պատ-մության և տնտեսագիտության, հետազյում հումանի-տար բաժանմունքների տարեկան ժողովներում...

Վ.Խոջաբեկյանը արդյունավետ գիտահետազոտա-կան աշխատանքներ կատարելու համար 1973 և 1978թթ. արժանացել է ՀՀ ԳԱԱ «Պատվոգրի», 1979թ. գետեղվել է Շայաստանի Շանրագիտարանի 5-րդ և 1995թ. Շայաս-տանի համառոտ հանրագիտարանի 2-րդ հատորներում, 2000թ. Ամերիկյան կենտագորական ինստիտուտի բառա-րանում: 1999թ. Ամերիկյան կենսագորական ինստիտուտի

կողմից նա արժանացել է «1998թ. Տարվա մարդ» կոչմանը:

Ծավալուն է նրա գիտակազմակերպչական աշխատանքների շրջանակը: Մոտ կես դար նա դասախոսել է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում, իր գիտելիքներն անմնացորդ հաղորդել է իր սաներին: Միշտ նրա ուշադրության կենտրոնում է եղել կադրերի պատրաստման ու վերապատրաստման կարևոր գործը: Նրա գիտական ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել բազում ասպիրանտներ ու գիտաշխատողներ: Դրատարակած աշխատություններն այսօր դասագրքային արժեք ունեն բուհական, հետրուհական և լրացուցիչ մասնագիտական ուսումնական ոլորտներում:

Ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանն իր բեղմնավոր գործունեության արդյունքում ստեղծել է հանրապետության ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների գիտական ուղղություն և դպրոց: Այսօր նա իրավամբ հանրապետության տնտեսական ժողովրդագրության հիմնադիրն է և շարունակում է դրա գիտական ղեկավարումը:

Երկար տարիներ Վ. Խոջաբեկյանը եղել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալը, բաժանմունքի բյուրոյի անդամ. ներկայումս հումանիտար գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, փիլիսոփայության, տնտեսագիտության և իրավագիտության պրոբլեմային գիտական, Հայկական Հանրագիտարանի տնտեսագիտական, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի աւենախոսության պաշտպանության մասնագիտական խորհուրդների նախագահն է, Հայկական հանրագիտարանի գիտախմբագրական, տարբեր ամսագրերի խմբագրական խորհուրդների, այդ թվում «Պրոբլեմի տեղորիի ի պրակտիկի ուղղավավենիա» միջազգային ամսագրի՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից ներկայացուցիչ-անդամը և այլն: Այդ և Ո՞՛ ԳԱ «Օքեստվո ի էկոնո-

միկա» միջազգային ամսագրում, ինչպես նաև Շայկական հանրագիտարանի բազմաթիվ հատորներում և հայկական ամսագրերում հեղինակել է հարյուրավոր արդիական արժեքավոր հոդվածներ:

Վ.Խոջաբեկյանը այն գիտականներից է, որոնց ուսումնասիրությունների արդյունքներն արժանացել են երկրի ղեկավարների ուշադրությանը՝ լիովին կիսելով հանրապետության բնակչության գրառվածության հիմնահարցի հետ կապված մտահոգությունը, շնորհակալության արժանանալով (1997թ. և 1998թ.) ակտիվ դիրքորոշման և գործարար առաջարկությունների համար:

Ենթադրությունների մեջ այդպես, իր ժամանակին աշխատությունների գործնական նշանակության համար իրենց շնորհակալական խոսքն են հղել նաև Շայաստանի կուսկենտկոնք, Նախարարների խորհուրդը, Պետական պատվավայրը, Երևանի քաղկոմը:

Վ.Խոջաբեկյանն իր ողջ գործունեության ընթացքում աչքի է ընկել սկզբունքայնությամբ, գիտական բարեխղճությամբ, աշխատասիրությամբ՝ ու պարտաճանաչությամբ: Նա իր հայրենանվեր ստեղծագործական ողջ գործունեությունը նվիրաբերել է ի շահ տնտեսագիտության, ի շահ հայրենիքի: Ահա թե ինչու «Գիտության բնագավառում ծեռք բերած ակնառու նվաճումների համար» 2003թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու անվան մեդալով իսկ տարիներ առաջ՝ շքանշաններով, ԽՍՀՄ պետական և ազգային պատվավայրերում առաջատար գործունեության համար՝ պատվորակությունում պատվավայրերում:

Վ.Ա.Միքայելյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Գ.Գ.Խանիկյան

Տնտեսագիտության դ-ր,

Ա.Ա.

պրոֆ.

Վ.Ն.Կարապետյան

Պատմական գիտությունների

Ե.Յ.Օրոյան

դ-ր, պրոֆ.

Տնտեսագիտության դ-ր,

պրոֆեսոր

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, НАУЧНОЙ, НАУЧНО-Организационной и педагогической деятельности

Действительный член Национальной Академии наук Республики Армения, доктор экономических наук, профессор Владимир Егишевич Ходжабекян - один из видных ученых-экономистов, пользующийся большим признанием не только в Республике Армении, странах СНГ, но и за рубежом. Около пятидесяти лет научной деятельности, подготовка экономических кадров – таков плодотворный жизненный путь академика.

В.Е.Ходжабекян родился 2 марта 1929г. в селе Хачах-бюр Варденисского района Республики Армении. Получив начальное образование в родном селе, в 1946г. окончил Варденисскую среднюю школу. В 1954г. с отличием окончил экономический факультет Ереванского государственного университета, где и с 1955 по 1959гг. проходил аспирантуру по специальности "экономика". В 1963г. защитил кандидатскую, а в 1975г. - докторскую диссертацию. В 1966г. ему было присвоено ученое звание старшего научного сотрудника, 1977г. - профессора. В 1982г. избран членом-корреспондентом АН АрмССР, 1994г. - академиком НАН РА, а в 1999г. – академиком Международной Академии наук в области проблем Национальной безопасности.

Президиум НАН РА, учитывая огромные научные достижения Ходжабекяна, отмечает: "Трудно переоценить его заслуги в развитии отечественной экономической мысли, постоянное, неутомимое стремление ученого-гражданина в служении Отечеству и народу своими фундаментальными научными исследованиями."

Значителен вклад В.Е.Ходжабекяна в развитии экономической мысли. Он является автором 327 изданных трудов, в том числе десяти монографий, сотен статей, отредактированных книг, а также 160 неопубликованных научных докладов, докладных, выступлений и других архивных материалов.

Научные труды на армянском, русском, английском, немецком и других языках были изданы в Ереване, Москве, Киеве, Тбилиси, Берлине, Нью-Йорке, Париже, Афинах, Дели, Тегеране, Вене и других городах, и принесли заслуженное признание ученому во многих странах мира.

С 1970-х годов по сей день он с научными докладами выступает на Международных конференциях (в Ереване, Москве, Берлине, Ленинграде, Киеве, Сиднее, Будапеште, Афинах, Дели, Тегеране, Вене, Лейпциге, Дрездене, Алма-Ате, Тбилиси, Ташкенте, Ашхабаде, Оренбурге и др.), материалы которых издавались в международной и отечественной периодике.

